

1.	27.03.07	121	ԼՂՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 28-ի «Կոնցեսիոն վճարի չափը և վճարման կարգը սահմանելու մասին» թիվ 338 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
----	----------	-----	--



## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 նոյեմբերի 2003թ.

N 338

ք.Ստեփանակերտ

#### Կոնցեսիոն վճարի չափը և վճարման կարգը սահմանելու մասին

«Ընդերքն ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ԼՂՀ օրենքի 48-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել կոնցեսիոն վճարի չափը՝

ա) ուսումնասիրության լիցենզիայի կամ ուսումնասիրության հատուկ լիցենզիայի դեպքում ընդերքի հատկացված տեղամասի յուրաքանչյուր քառակուսի կիլոմետրի համար՝ նվազագույն աշխատավարձի հնգապատիկը.

բ) հանքարդյունահանման լիցենզիայի կամ հանքարդյունահանման հատուկ լիցենզիայի դեպքում ընդերքի հատկացված տեղամասի յուրաքանչյուր քառակուսի կիլոմետրի համար՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը:

2. Կոնցեսիոն վճարը տարեկան միանվագ կարգով վճարվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե՝ մինչև յուրաքանչյուր հաշվետու տարվա ավարտին հաջորդող ամսվա 30-ը:

3. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2003 թվականի նոյեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների նկատմամբ:

**ԼՂՀ վարչապետ**

**Ա.Դանիելյան**